

2612

103

244

7-28

1931

103

ՊԱՏԱՍԻԱՆԴ

ՍՈՒՐԲ ԳՐԳԵՆ

ՏՊԱՐԱՆ «ԱԶՍ»

ԵՐԵՎԱՆ - 1931

244
Պ-28

2001

2010

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Դ

ՍՈՒՐԲ ԳՐՔԷՆ

ԻՆՉ Է ԻՍԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ.

Եւ ամէն բան անոր ոտքերուն տակ հաղանդեցուց, և զանիկա ամէն բաներու վրայ եկեղեցիին զլուխ դրաւ, որ անոր մարմինն է, անոր լուսմը՝ որ կը լեցնէ ամենը ամեն բանի մէջ»։ (Եփես. Ա. 22, 23)

«Եւ անիկա է մարմինն, այսինքն եկեղեցւոյն զլուսը, որ սկիզբն է, մեռելներէն անդրանիկը. որպէս զի ինք ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ»։ (Կող. Ա. 18)

ՄԷԿԸ ԻՆՉՊԷՍ ԻՍԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՆԴԱՄ ԿԸԼԼԱՅ.

«Ձևատուած կ'օրհնէին, ու բոլոր ժողովուրդին առջև շնորհք կը գտնէին. և Տէրը օրէ օր փրկուածները կաւելցնէր եկեղեցիին»։ (Գործք. 4. 7.) «Վասնզոր մեք ամենս մեկ հոգիով մեկ մարմին ըլլալու մկրտութեամբ, թէ՛ հրեաներ, թէ՛ հեթանոսներ, թէ՛ ծառաներ, թէ՛ ազատներ, և ամէնս ալ մէկ հոգիէ խմբինք»։ (Ա. Կորնթ. ԺԲ. 13)։

ՄԷԿԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՆՈՐ ԱՆԴԱՄ ՄՆԱԼ

Յիսուս ըսաւ, «Իմ մէջս կեցեմ, եւ ես ձեր մէջ. ինչպէս ճիւղը չկրնար ինքրիմէ պտուղ բերել, եթէ որթին վրայ հաստատուած չըլլայ, նոյնպէս դուք չեմ կրնար, եթէ իմ վրաս հաստատուած չ'ըլլաք»։ (Յովս. ԺԵ. 4)։

Ո՞Վ Է ԻՍԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՇԻՆՈՂԸ

«Եւ ես քեզի կ'ըսեմ որ դուն Պետրոս ես, ու այս մէջին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, եւ զմոխքին զոները զանկա պիտի չյաղթեն: (Մատթ. Ժ. 2. 18)

Ո՞ՐՆ Է ՀՈՆ ՄՏՆԵԼՈՒ ԴՈՒՌԸ

«Ես եմ դուռը, եթէ մէկը ինձմէ ներս մտնէ, պիտի փրկուի, ու պիտի մտնէ ու ելլէ եւ արօտ գտնէ: (Յովհ. Ժ. 9):

ԻՍԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՄ՝ ՄԸՆ Է

«Բայց ճիմա Ասուած անդամները դրաւ՝ առնոց ամէն մէկը մարմինն մէջ, ինչպէս ինք ուղեց» (Ա. Կորնթ. ԺԲ. 18):

«Եւ ինք մեկ փանթ տուաւ առաքելներ ըլլալու, մէկ քանին մարգարէներ, մէկ քանին աւետարանիչներ, մէկ քանին հովիւներ ու վարդապետներ. սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօնին գործին համար, Քրիստոսի մարմնին շինութեանը համար. մինչեւ ամէն ալ հասնինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալուն միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հաւակին չափը ունենալու»: (Եփես. Դ. 11—13)

ՄԷԿԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԿՈՐՍՆՑՆԷ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

«Ուստի տես Աստուծոյ քաղցրութիւնը ու խնայութիւնը. կործանումներուն վրայ խտուրթիւն, և քու վրայ քաղցրութիւն, եթէ այն քաղցրութեան մեջ կենաս. ապա քե ոչ՝ դուն ալ պիտի կտրուիս»: (Հռովմ. ԺԱ. 22)



«Եւ Տէրը ըսաւ Մովսէսի, ով որ ինձի դեմ մեղանշեց, զանկա իմ գիրքես պիտի աւերեմ»: (Ելից ԼԲ. 33):

Ո՞ՒՐ ԿԱՐՁԱՆԱԳՐՈՒԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

«Բայց դուք անոր վրայ մի ուրախանաք որ չարոգիները ձեզի կը հնազանդին, հապա ուրախացէք որ ձեր անուցները երկիցք գրուած են»: (Դուկ. Ժ. 20):

«Ու երկիցք գրուած անդրանիկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին և Աստուծոյ՝ որ ամէնուն դատաւորն է, ու արդարեւորն հոգիներուն՝ որոնք կատարուեր են»: (Եբր. ԺԲ. 23):

Ո՞ՐՔԱՆ ՄԵԾ Է ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՆ

«Ասոր համար ծունկի վրայ գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի հօրը առջև, ուրկէ ամեն ազգասոճմ երկիցքի մեջ ու երկրի վրայ անուն կ'առնեն»: (Եփես. Դ. 14—15):

«Եւ Տէրը օրէ օր փրկուածները կ'աւելցնէր եկեղեցիին»: (Գործք. Բ. 47):

Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՐՏԱԴՐԷ ԵԿԵՂԵՑԻՆ

«Բոլոր գիրքը Աստուծոյ տունն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու և արդարութեան խրատելու համար.» (Բ. Տիմ. Գ. 16):

Ի՞ՆՉ Է ԱՆՈՐ ԱՆՈՒՆԸ

«Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն և բոլոր հօտին որուն վրայ հոգին Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ Աստուծոյ եկեղեցին հովուելու զոր իր արիւնովը ստացաւ»: (Գործք Ի. 28):

«Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցւոյն»: (Ա. Կորնթ. Ա. 2):

37450-67

51187-4.2.

ԻՆՉՈՒՒ ԱՆ ԿԸ ԿՈՉՈՒԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ

«Ուրկէ (որմէ) ամէն ազգատոհմ (ամբողջ ընտանիքը) երկիրնքի մէջ ու երկրի վրայ անուն կառնէ»։ (Եփ. Գ. 14)

«Ով Սուրբ Հայր, քու անունովդ պահէ զանոնք որ դուն ինձի տուիր, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս մենք մէկ ենք»։ (Յովհ. Ժէ. 11 Բ.)

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ՅՐՈՒԵՑԱՆ.

«Վասնզի Տէր եհովա այսպէս կը'սէ. Ահա ես ինքնին իմ ոչխարներս պիտի խնդրեմ ու պիտի փնտռեմ. ինչպէս հովիւը, երբ իր ցրուած ոչխարներուն մէջ կը գտնուի, իր հօտը կը փնտռէ, այսպէս ես իմ ոչխարներս պիտի փնտռեմ ու պիտի ազատեմ զանոնք ամէն տեղերէն, ուր ամպի ու մառախուղի օրը ցրուեցան»։ (Եղեկիէյ. ԼԳ. 11.-12.)

«Որովհետեւ տակաւին ձեր մէջ նախանձ ու հակառակութիւն եւ բաժանումներ կան, չէ՞ որ մարմնաւսէք, ու մարդկօրէն կը քայէք»։ (Ա. Կորնթ. Գ. 3.)

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԻՐ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ Է.

«Բայց ոչ թէ միայն անոնց համար կաղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինձի հաւատացողներուն համար ալ. որպէսզի ամեն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն'ով Հայր, իմ մէջս ու ես քու մէջդ, որպէսզի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան, որպէս զի աշխարհ հաւատաց թէ դուն զրկեցիր զիս»։ (Յովհ. Ժէ. 20=21.)

«Ձեզի կաղաչեմ, եղբայրներ, մեր Տէր Յիսուս Բրիտոսի անունովը, որ միևնոյն խօսքը ունենաք ամէնդ, որ երկպառակութիւններ չըլլան ձեր մէջ. հապա՜ դուք մէկ միտքի ու մէկ խորհուրդի վրայ հաստատուած ըլլաք»։ (Ա. Կորնթ. Ա. 10.)

«Եւ հաւատացեալներուն Բաղմութիւնը մէկ սիրոս ու մէկ հոգի ունէին»։ (Գործք. Գ. 32.)

ՔՐԻՍՏՈՍԻ ՆՊԱՏԱՊԵՆ Է ՄԻՈՒԹԻՒՆԸ

«Ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս բաղէն չեն, զանոնք ալ պէտք է որ բերեմ ու իմ ձայնըս պիտի լսեն եւ պիտի ըլլան մէկ հօս ու մէկ հովիւ»։ (Յովհ. Ժ. 16.)

«Վասն զի անիկա է մեր խաղաղութիւնը, ու երկուք մէկ ըրաւ, ու մէջտեղի բաժանող պատը, այսինքն իրարու հետ եղած թշնամութիւնը, իր մարմինովը քակեց»։ (Եփես. Բ. 14.)

ՄԻՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ՊԵՏԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԻ

Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի ըլլաք, քանզի ինչ մասնակցութիւն ունի՝ արդարութիւնը անօրէնութեան հետ, և ինչ հաղորդութիւն ունի լոյսը խաւարին հետ... Անոր համար ելիմ անոնց մեջէն և զատուեցեմ, կըսէ Տէրը, եւ պիղծ բանի մի դպիմ»։ (Բ. Կորնթ. Զ. 14, 17)

«Սրբէ զանգեմ քու ճշմարտութիւնովդ, քու խօսքովդ ճշմարտութիւն է. բայց ոչ քե միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինձի հաւատացողներուն համար ալ, որպէս զի ամեն ալ մէկ ըլլան»։ (Յովհ. Ժէ. 17, 20, 21)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒԻՔ Է

«Ամեն իշխանութիւն ինձի տուեցաւ երկինքի եւ երկրի մէջ»։ (Մատթ. ԻԸ. 18)

«Բայց այս բանը ոչ թէ ինքրիմէ զրուցեց, հապա այն տարուան քահանայապետը ըլլալով, մարդարէացաւ թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնէր, եւ ոչ թէ միայն ազգին համար, հապա որ Աստուծոյ ցիրուցան եղած որդիներն ալ մէկտեղ ժողովէ»։ (Յովհ. ԺԱ. 51—52)

Այս քաղաքին մէջ կան անհատներ, որոնք վերագրեալ Սուրբ Գրային ճշմարտութիւնները կ'ընդունին ամբողջութեամբ: Աւելի լուսաբանութեան պէտք զգացողները կրնան գրաւոր կերպով, կամ անձամբ, դիմել՝

Willam A. Fleenor
89 Rue Clemenceau
Ras-Beirut

Մեր ժողովները տեղի կունենան

1. Պապ Իտրիսի մօտ, Ֆրանսացի Բողոքականաց աղջկանց դպրոցին մէջ, ամէն կիրակի առաւօտ ժամը 8,30—9,30:
2. Զորեքշաբթի երեկոյեան ժամը 7,30 ին. Ամերիկեան հիւանդանոցի նոր քլինիքին մօտ, Քլէմանսօ փողոց թիւ 89 տան վերի յարկը, անգլիերէն լեզուով:

<< Ազգային գրադարան



NL0029519

